

## Անհատական սպառողական վարկի տրամադրման պայմաններ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բանկը վարկ տրամադրելու որոշումը կայացնում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով վարկային հայտի համապատասխանությունը տվյալ վարկատեսակի հայտարարված պայմաններին, ինչպես նաև գնահատելով այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են հաճախորդի վարկարժանությունը, ժամկետանց պարտավորությունների առկայությունը և այլ հանգամանքներ:

1.2. Վարկը տրամադրվում է անկանխիկ:

1.3. Վարկի դիմումը ընդունվում է Բանկի ցանկացած մասնաճյուղում/գրասենյակում:

### 2. Զգուշացում

2.1. Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստր և ԱԲՈԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ:

### 3. Տուգանային տոկոսադրույք և տույժեր

3.1. Վարկի կամ տոկոսագումարների վճարումները ուշացնելու դեպքում ուշացված գումարի վրա կկիրառվի տուգանային տոկոսադրույք՝ 5% տարեկան գումարած վարկի տարեկան անվանական տոկոսադրույք:

3.2. Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

### 4. Վարկի դիմումի մասին որոշման կայացման և վարկի տրամադրման ժամկետներ

4.1. Վարկային հայտի վերաբերյալ վերջնական որոշման կայացման և Հաճախորդին որոշման մասին տեղեկացնելու ժամկետը՝ Բանկի կողմից պահանջված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 2-5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.2. Վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը՝ վարկային պայմանագիրը ստորագրելուց և վարկային պայմանագրով սահմանված վճարումները կատարելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. Վարկի հաստատման և մերժման չափանիշները

5.1. Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ.

1)Փաստաթղթավորված կայուն եկամուտ, որը համապատասխանում է տվյալ վարկատեսակի տրամադրման նվազագույն պահանջներին:

2) Դրական վարկային պատմություն, ըստ որի վերջին 12 ամիսների ընթացքում հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը չպետք է գերազանցի Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն շեմը:

3) Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթեր:

5.2. Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ.

1) Վարկը մարելու համար անբավարար կամ չփաստաթղթավորված եկամուտներ:

2) Վարկի ոչ նպատակային օգտագործում:

3) Հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում:

4) Բացասական վարկային պատմություն, ըստ որի վերջին 12 ամիսների ընթացքում: հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը գերազանցում է Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն շեմը:

5) Հաճախորդի տարիքը չի համապատասխանում տվյալ վարկատեսակի տրամադրման համար Բանկի կողմից սահմանված չափանիշին:

Թարմացվել է՝ 14/01/2019 15:00